Քաղաքացիական գործ թիվ՝ **ԵԴ2/26840/02/23**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ նաև Դատարան)

նախագահությամբ՝ դատավոր Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆԻ
2023 թվականի հոկտեմբերի 6-ին

ուսումնասիրելով «ԹՈՒՆԵԼ ՍԱԴ ԱՐԻԱՆԱ» ՓԲ ընկերության հայցի հիման վրա հարուցված թիվ ԵԴ2/26840/02/23 քաղաքացիական գործի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Ընկերության տնօրենը 2023 թվականի օգոստոսի 21-ին հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ խնդրելով անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ Երևան քաղաքում Ջրվեժում ավտոբուսային հավաքակայանի վերակառուցման աշխատանքերի ձեռքբերման նպատակով հայտարարված ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-23/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի թիվ 4-րդ արձանագրությունով «ԹՈՒՆԵԼ ՍԱԴ ԱՐԻԱՆԱ» ՓԲ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը:

Հայցադիմումը 2023 թվականի օգոստոսի 21-ին մակագրվել է Դատարանի դատավոր Մ. Տաշչյանին:

Դատարանի դատավոր Մ. Տաշչյանի 29.08.2023 թվականի զեկուցագրի հիման վրա քաղաքացիական գործը դատավոր Ա. Մուշեղյանին է վերամակագրվել 2023 թվականի օգոստոսի 30-ին, իսկ դատավորի աշխատակազմին է հանձնվել 2023 թվականի օգոստոսի 31-ին:

Դատարանի դատավոր՝ Ա. Մուշեղյանիս կողմից 05.09.2023 թվականին կայացվել է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում:

Պատասխանողի կողմից 14.09.2023 թվականին Դատարան է ներկայացվել հայցադիմումի պատասխան, որը դատարանի գրասենյակ է մուտքարգվել 19.09.2023 թվականին:

Դատարանի դատավոր՝ Ա. Մուշեղյանիս կողմից 19.09.2023 թվականին կայացվել է դատական նիստ նշանակելու մասին որոշում:

Հայցվորի ներկայացուցչի կողմից 28.09.2023 թվականին Դատարան է ներկայացվել գրություն՝ հայցից հրաժարվելու և քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին:

Դատարանի կողմից հայցից հրաժարվելու վերաբերյալ միջնորդության քննարկման նպատակով 2023 թվականի հոկտեմբերի 6-ին, ժամը՝ 10:30-ին նշանակվել է դատական նիստ, որի ընթացքում միջնորդության քննարկումը համարվել է ավարտված և դատական ակտի հրապարակման օր է նշանակվել նույն օրը:

2.Դատարանի պատճառաբանությունները, վերլուծությունները և եզրահանգումները գործի վարույթը կարճելու վերաբերյալ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցադիմումի կամ դիմումի հիման վրա: Գործին մասնակցող անձն իրականացնում է իր դատավարական իրավունքները, տնօրինում է դատական պաշտպանության միջոցները և եղանակները սեփական հայեցողությամբ՝ օրենքով սահմանված կարգով: Սույն օրենսգրքով սահմանված կարգով հայցվորը (դիմողը) իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվելու իր պահանջից, փոխելու հայցի առարկան և հիմքը կամ դրանցից յուրաքանչյուրը, պատասխանողն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն ընդունելու հայցվորի պահանջը, կողմերը կարող են վեճը լուծել հաշտության համաձայնությամբ, սկսել արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարական գործընթաց կամ գործը հանձնել արբիտրաժի լուծմանը:

Նշվածից հետևում է, որ համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարությունում գործող տնօրինչականության սկզբունքի՝ գործին մասնակցող անձն օրենքով սահմանված կարգով սեփական հայեցողությամբ է տնօրինում իր նյութական և դատավարական իրավունքները և որոշում իր իրավունքերի պաշտպանության միջոցներն ու եղանակները: Մասնավորապես՝ նշված սկզբունքի հիման վրա կողմերը որոշում են վեճի հետագա ընթացքն ու լուծման ճանապարհները, որին համապատասխան էլ դատարաններն իրականացնում են արդարադատություն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցվորն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվել իր պահանջներից մինչև առաջին ատյանի դատարանի կողմից դատաքննությունն ավարտելը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը նախքան գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելը գործին մասնակցող անձանց բացատրում է պահանջից հրաժարվելու դատավարական հետևանքները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե՝ հայցվորը կամ դիմողը հրաժարվել է պահանջից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի վարույթը կարճելու մասին առաջին ատյանի դատարանը կայացնում է որոշում (...):

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ եթե հայցվորը դատական նիստից դուրս ներկայացնում է պահանջներից հրաժարվելու մասին գրավոր միջնորդություն, ապա առաջին ատյանի դատարանը միջնորդությունն ստանալու պահից տասնօրյա ժամկետում հրավիրում է դատական նիստ՝ պահանջներից հրաժարվելու մասին միջնորդությունը և դատական ծախսերի բաշխման հարցերը քննելու նպատակով: Եթե հայցվորը նիստի ժամանակ պնդում է

պահանջներից հրաժարվելու իր միջնորդությունը կամ պատշաճ տեղեկացված լինելու պայմաններում չի ներկայանում դատական նիստին, ապա առաջին ատյանի դատարանը որոշում է կայացնում գործի վարույթը կարճելու մասին:

ՀՀ վճռաբեկ դատարան նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ հայցից հրաժարումը հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջից և իրավունքի պաշտպանության դատավարական միջոցից անվերապահորեն, առանց որևէ պայմանի հրաժարումն է: Հայցից հրաժարումը հայցվորի միակողմանի տնօրինչական գործողությունն է, որը կարող է տեղի ունենալ տարբեր նկատառումներով: Դատարանը չպետք է անդրադառնա հայցից հրաժարվելու պատճառների գնահատմանը, սակայն պարտավոր է հայցվորին պարզաբանել կատարվող գործողության իմաստն ու նշանակությունը և համոզվել, որ հայցից հրաժարումը վերջինիս ազատ կամքի արտահայտությունն է և զերծ է այլ անձանց հարկադրանքից (տե՛ս, թիվ ԵԿԴ/0462/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.10.2012 թվականի որոշումը):

Սույն գործով Հայցվորի ներկայացուցիչը 28.09.2023 թվականին Դատարան է ներկայացրել գրություն հայցից հրաժարվելու վերաբերյալ:

Դատարանը հրավիրել է դատական նիստ «Հայցից հրաժարվելու» միջնորդությունը և դատական ծախսերի բաշխման հարցերը քննելու նպատակով, հայցվոր կողմը ներկայացել է նշված դատական նիստին, իսկ ծանուցված պատասխանող կողմը դատական նիստի ժամանակի և վայրի վերաբերյալ տեղեկացված լինելու պայմաններում չի ներկայացել դատական նիստին:

Հայցվորը դրսևորել է միակողմանի տնօրինչականություն և հրաժարվել է սույն գործով ներկայացված նյութաիրավական պահանջից, իսկ դատարանի կողմից հրավիրված դատական նիստին՝ պնդել է պահանջից հրաժարվելու իր միջնորդությունը: Ուստի նման պայմաններում ամբողջ վերոգրյալի եզրահանգմամբ Դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործի վարույթը ենթակա է կարճման՝ հայցից հրաժարման հիմքով:

<u>3. Դատական ծախսերի բաշխման հարցի լուծման վերաբերյալ.</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դրամական պահանջներով հայց ներկայացնելու համար պետական տուրքի չափը որոշվում է հայցագնի հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայցագինը որոշվում է դրամական միջոցներ բռնագանձելու հայցերով՝ պահանջվող գումարի չափով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցագնի մեջ մտնում են նաև պահանջվող տուժանքի (տուգանքի, տույժի) և տոկոսների գումարները՝ հայցադիմումը ներկայացնելու օրվա դրությամբ:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9.2 կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գնման գործընթացներին վերաբերող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վեճերով՝ բազային տուրքի 100-ապատիկի չափով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա, բացառությամբ նույն հոդվածով նախատեսված դեպքերի:

Տվյալ դեպքում, Դատարանն արձանագրում է, որ հայցը ներկայացնելու օրվա դրությամբ հայցվոր կողմը վճարել է անհրաժեշտ չափի պետական տուրքի գումար, հաշվի առնելով, որ Ընկերության ներկայացուցչի կողմից *չի պահանջվել նշված դատական ծախսը, և չի նշվել հայցից հրաժարման /պարտավորության դադարման հիմք(եր)ը/, պատճառները.* Դատարանը գտնում է, որ հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի մասով՝ դատական ծախսի հարցը պետք է համարել լուծված, իսկ սույն գործի քննության հետ կապված այլ ծախսեր առկա չեն:

Հաշվի առնելով վերոնշյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 110-րդ, 149-րդ, 182-րդ, 183-րդ, 188-րդ, 199-200-րդ և 360-362-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Թիվ ԵԴ2/26840/02/23 քաղաքացիական գործի վարույթն ըստ հայցի «ԹՈՒՆԵԼ ՍԱԴ ԱՐԻԱՆԱ» ՓԲ ընկերության հայցադիմումն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ Երևան քաղաքում Ջրվեժում ավտոբուսային հավաքակայանի վերակառուցման աշխատանքերի ձեռքբերման նպատակով հայտարարված ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-23/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի թիվ 4-րդ արձանագրությունով «ԹՈՒՆԵԼ ՍԱԴ ԱՐԻԱՆԱ» ՓԲ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, կարճել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման պահից 15 օրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆ**